ԿՈՉ

Թիւրքաց Հայաստանի հայ աղետեալներին օգնող ՀԱԳԱՆԱԿԻՉ ՄԱՄՆԱԺՈՂՈՎԸ, վերսկսելով իր գործունէութիւնը, Կայսերական Բարձր. կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն, սրանով կոչ է անում Կայսրութեան բոլոր հայ ազգաբնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել Թիւրքաց Հայաստանի տառապեալ և աղէտեալ հայ ժողովրդին, մանաւանդ Ադանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին։

Անօրինակ է պատմութեան մէջ և սոսկալի այն աղէտը, որին ենթարկվեց Ադանայի և շրջակայքի հայ ժողովուրդը։ Եւ առաւել ուրեմն բարոյական ահագին պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի և այլ տեղերի հայ ժողովրդի վրա՝ փութալ ամոքել դառն վշտերը, սրբել աղի արտասուքները և փրկել անտէր, անօգնական մնացած որբերին։

Նուէրները պէտք է ուղարկել Հանգանակիչ մասնաժողովի անդամ—գանձապահ Առաքել Սարուխանին այս հասցէով. Тифлисъ. Контора А. И. Мантащева и К°, Аракелу Саруханяну. Tifeis, Société Mantacheff et C.-ie A, Saroukhan.